աղօթից ՚ի փրկութիւն հոգւոց ամենայն հաւատացելոց։

Եւ արդ Հայրապետք տեղւոյն յետոյ չարժեալք ՚ի նախանձ, որք էին Քաղկեդոնիկք, խանդարեցին զամենայն կարգս վանօրէից մերոց· վասն որոյ իշխանքն Հայոց միաբանեալ եւտուն հինգ կենդինարս թագաւորին Յուստինոսի, որ է եօթանասուն հազար դահեկան, և ազատեցին յիշխանութենէ Հայրապետացն Յունաց զամենայն վանօրայս Հայոց, թէ արանց և թէ կանանց, և թէ խըրճիթք միանձանց, անդէն զինքեանս առնելով իշխեցողս։

Բայց յետոյ անփոյթ արարեալ իշխանացն Հայոց եւ կաթուղիկոսացն, որպէս և զայլս ՚ի մեծամեծ սպառնալիքացն զանց առնէին անհոգութեամբ· ուստի բազում վանօրայք տապալեալ քանդեցան, որք ունէին զբնակիչս հեզք և ծոյլ։ Իսկ որք էին ժիրք և պիտանիք եւ աստուածահաճոյ վարուք, պահեցին զիւրեանց սահման հաւատոյ, զեւս եւս վանօրայք նոցին մնան հաստատուն։ Այլ և յալով վանօրէից մերոց առաջնորդքն մինչ վախճանէին, ոչ ոք լինէր հոգաբարձու կարգել զայլ ոք առաջնորդ Հայոց, յաղագս որոյ զնոյն անտերունչ մնացեալ վանսն ամայասրեալ առնուին և սիրէին Յոյնք։ Դարձեալ և էր զի ինքեանք իսկ վանականքն Հայոց թողեալ զիւրեանց վանսն կամաւ ՚ի բաց գնային յաղագս ծանրութեան տաճկական հարկացն· եւ էր զի ՚ի վանս իւրեանց զկանայս և զսարկաւագուհիս բնակեցուցանէին, որք էին ընդ պարսպօք, զի աղատ լիցին ՚ի հարկապահանջութեանց, իրրեւ զվահան հաւատաւոր կանանց· եւ ինքեանք վանականք Հայոց ելանէին արտաքոյ քաղաքին յայլ տեղի, և փոխեալ զանուանսն դաւառաց և ազատաց եւ ազգացն, և յայլ անուն անուանէին զվանօրայս իւրեանց, թերեւս ՚ի նոցանէ գոյեն օգնութիւն ինչ և պահպանութիւն։

Արդ էին և յայլ տեղիս վանօրայք Հայոց ՚ի հրջակայս՝ յեգիպտոս, յԱղէքսանդրիա, ՚ի Թէփայիդ և ՚ի լեառն Սինէական վանօրայք մեծաւանք· նաեւ ՚ի լեառն Թափոր, և յեզր ծովուն Տիբերիայ, և ՚ի սահմանս Պաղեստինոյ· զորոց գլխովին լսով իսկ աչօք տեսեալ յաւն բազում մնալով անդ յերկրին յայնմիկ և հոգեպատում Մատեանք եւ Աստուածաչունչք անթիւ գտանէին ՚ի հայկական լեզու